# ՍՏԵՂԾԵԼ ԱՌՈՂՋ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երջանկության կերտվածքը (Փիլիպպեցիս)

Մաս 1 - Փիլիպպեցիս 1:1-11

## 1. Երախտապարտ լինել շրջապատիս մարդկանց համար

*«Գոհանում են իմ Աստծուց ամեն անգամ, որ ձեզ հիշում եմ.»* Փիլիպպեցիս 1:3

*«Ավետարանին ձեր հաղորդ լինելու համար՝ առաջին օրից մինչև հիմա:»* Փիլիպպեցիս 1:5

* Հիշիր լավագույնը և մոռացիր մնացածը

## 2. Ուրախությամբ աղոթել շրջապատիս մարդկանց համար

*«Ամեն ժամանակ իմ բոլոր աղոթքներում <u>ձեր բոլորի համար աղոթք եմ անում ուրախությամբ</u>...»* Փիլիպպեցիս 1:4

* Վատ փոխհարաբերությունները լավի փոխելու ամենակարճ ճանապարհը - Սկսիր նրանց համար աղոթել

*«Եվ այս աղոթքն եմ անում, որ ձեր <u>սերը ավելի ու ավելի հարստանա</u> գիտությամբ ու ամեն հասկացողությամբ, որպեսզի դուք լավագույնն ընտրեք, որ Քրոստոսի օրը <u>մաքուր լինեք ու անարատ.</u> Հիսուս Քրիստոսի ձեռքով <u>արդարության պտուղներով լցված</u>՝ Աստծու փառքի ու գովության համար:»* Փիլիպպեցիս 1:9-11

Աղոթիր, որ նրանք...

- Աճեն սիրո մեջ

*«որ ձեր սերը ավելի ու ավելի հարստանա»* Համար 9

- Իմաստուն որոշումներ կայացնեն

*«գիտությամբ ու ամեն հասկացողությամբ, որպեսզի դուք լավագույնն ընտրեք»* Համար 9բ-10ա

- Ազնվությունով ապրեն

*«որ Քրոստոսի օրը մաքուր լինեք ու անարատ.»* Համար 10բ

- Հիսուսին նմանվեն

*«<u>Հիսուս Քրիստոսի ձեռքով արդարության պտուղներով լցված</u>՝ Աստծու փառքի ու գովության համար:»* Համար 11

*«Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն:»* Գաղ 5:22-23

## 3. Սպասել լավագույնը շրջապատիս մարդկանցից

*«Եվ հաստատ համոզված եմ սրանում, որ նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը:»* Փիլիպպեցիս 1:6

* Ուրախանամ թե մարդիկ ինչքա՞ն են աճել, ոչ թե դատիմ թե դեռ ինչքա՞ն պիտի աճեն

*«Ինչպես որ պետք է ես այս բանը մտածեմ ձեր բոլորի մասին, որովհետև <u>ձեզ իմ սրտում ունեմ.</u>»* Փիլիպպեցիս 1:7

## 4. Սիրել իմ շրջապատի մարդկանց, ինչպես Հիսուսը սիրեց

*«Աստված ինձ վկա է, որ ինչպե՛ս եմ <u>Հիսուս Քրիստոսի գութով փափագում</u> ձեզ բոլորիդ:»* Փիլիպպեցիս 1:8

*«Սրանով ճանաչեցինք <u>Քրիստոսի սերը</u>, որ նա իր անձը տվեց մեզ համար, ու մենք էլ պարտավոր ենք մեր անձերը դնել մեր եղբայրների համար:»* Ա Հովհաննես 3:16

Հաջորդ Քարոզի Թեման

«ԼԻՆԵԼ ԵՐՋԱՆԻԿ ԱՆԿԱԽ ՊԱՐԱԳԱՆԵՐԻՑ»

Հովիվ Սարօ Խաչիկեան